

“Չաարատ Կապան” ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և անկախ
աուդիտորի եզրակացություն

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

“Չաարատ Կապան” ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

- | | |
|---|--|
| 3 | Անկախ աուդիտորի եզրակացությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ |
| 5 | Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն |
| 6 | Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն |
| 7 | Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն |
| 8 | Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն |
| 9 | Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն |
-

**ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Ներկայացվում է «Չաարատ Կապան» ՓԲԸ Տնօրենների Խորհրդին

Կարծիք

«Չաարատ Կապան» ՓԲԸ-ի (Ընկերություն) ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք քաղված են Ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, ինչպես նաև ամփոփ հաշվետվություններին կից ծանոթագրությունը:

Մեր կարծիքով, կից ամփոփ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ-ներ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները և նրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը չի արտացոլում ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի ազդեցությունը:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և նրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք 2020թ. ապրիլի 28-ին արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական եզրակացություն աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորական եզրակացությունում մենք նաև, առանց ձևափոխելու մեր կարծիքը, ներառել ենք «Անընդհատության վերաբերյալ էական անորոշություն» բաժին, առ այն որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 3(ա)-ում նշված հանգամանքները մատնանշում են էական անորոշության առկայություն, որը կարող է առաջացնել Ընկերության անընդհատության հիմունքով գործելու կարողության վերաբերյալ էական կասկած:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Շանթազրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք արտահայտել կարծիք, արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտի առաջադրանք» ԱՄՍ 810-ի համաձայն իրականացված ընթացակարգերի:

9 հունիսի 2020թ.

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան
Տնօրեն



Գնել Խաչատրյան
Աուդիտոր

“Չաարատ Կապան” ՓԲԸ

**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	2019	2018
	<u>Հազ.դրամ</u>	<u>Հազ.դրամ</u>
Հասույթ	35,036,310	30,972,607
Վաճառքի ինքնարժեք	(30,810,444)	(25,641,500)
Համախառն շահույթ	4,225,866	5,331,107
Այլ եկամուտ	612,667	407,782
Իրացման ծախսեր	(1,538,858)	(1,407,686)
Վարչական ծախսեր	(2,268,069)	(2,862,271)
Խմբի կառավարման ծախսեր	(1,079,755)	-
Այլ ծախսեր	(748,310)	(890,369)
Գործառնական (վնաս)/շահույթ	(796,459)	578,563
Ֆինանսական եկամուտ	906,209	33,428
Ֆինանսական ծախսեր	(2,102,344)	(469,287)
Փոխարժեքային տարբերություններից եկամուտ, զուտ	31,581	107,570
(վնաս)/շահույթ մինչև հարկումը	(1,961,013)	250,274
Շահութահարկի գծով ծախս	(973,655)	(426,824)
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	(2,934,668)	(176,550)

5-ից 9-րդ էջերում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 9-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Դավիթ Թովմասյան
Գլխավոր տնօրեն



Մերի Գալստյան
Ֆինանսական վերահսկողության մենեջեր

“Չաարատ Կապան” ՓԲԸ

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	31.12.2019	31.12.2018
	Հազ.դրամ	Հազ.դրամ
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	25,257,998	27,945,254
Ոչ նյութական ակտիվներ	748,010	172,314
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ	18,859	314,690
Հետաձգված հարկային ակտիվներ	1,540,640	1,978,298
Ստացվելիք գումարներ կապակցված կողմերից	10,110,025	-
Հետաձգված կառավարման վճարներ	2,453,990	-
Հետաձգված ԱԱՀ կանխավճար	-	401,333
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	40,129,522	30,811,889
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	5,146,246	7,624,180
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,570,821	2,280,608
Ստացվելիք գումարներ կապակցված կողմերից	1,850,535	-
Հետաձգված կառավարման վճարներ	1,177,915	-
Հետաձգված ԱԱՀ կանխավճար	401,333	912,216
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,430,492	1,573,311
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	14,577,342	12,390,315
Ընդամենը ակտիվներ	54,706,864	43,202,204
Պարտավորություններ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ստացված վարկեր և փոխառություններ	144,751	-
Հետաձգված ԱԱՀ պարտավորություններ	-	401,333
Ակտիվների ապագործարկման գծով պահուստ	4,143,839	4,004,949
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	4,288,590	4,406,282
Ընթացիկ պարտավորություններ		
Ստացված վարկեր և փոխառություններ	17,722,022	5,356,335
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,636,962	3,030,759
Այլ պահուստներ	153,032	58,978
Հետաձգված ԱԱՀ պարտավորություններ	401,333	912,216
Շահութահարկի գծով պարտավորություն	1,959	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	23,915,308	9,358,288
Ընդամենը պարտավորություններ	28,203,898	13,764,570
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	29,234,400	29,234,400
Պահուստային կապիտալ	4,407,493	4,407,493
Էմիսիոն եկամուտ	2,141,437	2,141,437
Կուտակված վնաս	(9,280,364)	(6,345,696)
Ընդամենը սեփական կապիտալ	26,502,966	29,437,634
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	54,706,864	43,202,204

“Չաարատ Կապան” ՓԲԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2019 Հազ.դրամ	2018 Հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը	(1,961,013)	250,274
Ճշգրտումներ		
Հիմնական միջոցների մաշվածություն	5,767,263	5,959,917
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	89,033	52,518
Պաշարների արժեզրկման գծով վերականգնում	(369,765)	(16,200)
Հարկային պարտավորության գծով պահուստի հակադարձում		(197,524)
Հիմնական միջոցների դուրսգրման պահուստի հակադարձում	(134,651)	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքի արժեզրկման գծով ծախս	-	76,059
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից/դուրսգրումից գուտ վնաս	105,661	49,690
Պաշարների դուրսգրումից ծախսեր	99,332	183,065
Իրավական պահանջների գծով պահուստի ծախս	94,054	15,621
Ֆինանսական եկամուտ – կապակցված կողմերից ստացվելիք անտոկոս միջոցների զեղչատոկոսի հաշվեգրում	(901,310)	-
Ֆինանսական ծախսեր	2,102,344	469,287
Փոխարժեքային տարբերություններից եկամուտ, գուտ	(31,581)	(107,570)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	4,859,367	6,735,137
Առևտրային և այլ դեբիտորական պարտքի (աճ)/նվազում	(2,384,086)	2,564,831
Հետաձգված կառավարման վճարների ավելացում	(3,631,905)	-
Պաշարների նվազում/(աճ)	2,270,650	(2,538,416)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքի աճ/(նվազեցում)	2,445,476	(715,316)
Այլ պահուստների վճարում	-	(1,584,000)
	3,559,502	4,462,236
Շահութահարկի վճարում	(534,038)	(909,529)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	3,025,464	3,552,707
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(2,120,065)	(5,830,577)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(664,729)	(18,008)
Ստացվելիք գումարներ կապակցված կողմերից	(16,621,675)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	-	204,882
Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(19,406,469)	(5,643,703)
Դրամական միջոցներ ֆինանսական գործունեությունից		
Հոսքեր ստացված վարկերից և փոխառություններից	(1,932,280)	-
Վարկերի, փոխառությունների և վարձակալության մայր գումարի մարում	(1,317,375)	-
Վարկերի, փոխառությունների և վարձակալության տոկոսագումարի մարում	19,479,200	-
Ֆինանսական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	16,229,545	-
Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր	(151,460)	(2,090,996)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	8,633	32,072
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	1,573,311	3,632,235
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,430,492	1,573,311

“Չաարատ Կապան” ՓԲԸ

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	Կանոնադրական կապիտալ Հազ.դրամ	Պահուստային կապիտալ Հազ.դրամ	Էմիոին եկամուտ Հազ.դրամ	Կուտակված վնաս Հազ.դրամ	Ընդամենը Հազ.դրամ
Մնացորդը առ 2018թ. հունվարի 1-ի	29,234,400	4,407,493	2,141,437	(6,169,146)	29,614,184
Տարվա վնաս	-	-	-	(176,550)	(176,550)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	-	(176,550)	(176,550)
Մնացորդը առ 2018թ. դեկտեմբերի 31-ի	29,234,400	4,407,493	2,141,437	(6,345,696)	29,437,634
Տարվա վնաս	-	-	-	(2,934,668)	(2,934,668)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	-	2,934,668	2,934,668
Մնացորդը առ 2019թ. դեկտեմբերի 31-ի	29,234,400	4,407,493	2,141,437	(9,280,364)	26,502,966

Ծանոթագրություն 1

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «Չաարատ Կապան» ՓԲԸ-ն (Ընկերություն) պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, քաղված են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկատվություն, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն ՖՀՄՄ-ների:

Աուդիտ անցած ամբողջական ֆինանսական հաշվետվությունները և նրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից: